

Մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի /23 դասաժամ/ հայոց պատմություն /9դասաժամ/, հայ եկեղեցու պատմություն /5դասաժամ/, հասարակագիտություն /5դասաժամ/, հայրենագիտություն /2դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անց է կացվում՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /ձև 1/
- 1 լուսանկար 3x4չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ /առկայության դեպքում/,
- ինքնակենսագրություն /ձև 5/,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
- որակավորմամ տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առակա են թերություններ, մասնակիցը կարեղ է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մարտի 23-ից մինչև ապրիլի 5-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. ապրիլի 8-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Նորավանի միջն. դպրոցում, հասցեն՝ գյուղ Նորավան, տեղեկությունների համար զանգահարել 094-94-25-83 հեռախոսահամարով: